ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՄԵՏԱՔՍԵԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն հայ անվանի բանաստեղծուհի, գրող, թարգմանիչ և հասարակական գործիչ Մետաքսեի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տիգրան Մեծի պողոտա հ.8 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՄԵՏԱՔՍԵԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անվանի բանաստեղծուհի, գրող, թարգմանիչ և հասարակական գործիչ Մետաքսեն /Մետաքսե Պողոսյան/ ծնվել է 1926թ. դեկտեմբերի 23-ին Արթիկի շրջանի Արևշատ գյուղում: 1952թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական, 1958թ.՝ ԽՍՀՄ գրողների միությանը կից Մոսկվայի Գորկու անվան գրականության ինստիտուտները:

1958թ. «Լիպեցկ» շոգենավով, ուր աշխատել է որպես նավաստի, եղել է Եգիպտոսում և Ալբանիայում: Հեղինակել է երեք տասնյակից ավելի գիրք՝ «Զգույշ, սիրտ է», «Սերը հավատ է», «Արցունքները չեն ծերանում», «Հազար ու մի սեր», «Երբ ես գալու, Տեր» և այլն: 1995թ. հրատարակել է «Շամիրամ» պոեմը: Մանկական գրքերից են՝ «Մաքրասեր Լիլիթը», «Լիլիթը և բադիկները», «Աչիկի և Վաչիկի զրույցը», «Ճստիկը»: Մոսկվայում ռուսերեն հրատարակվել են «Ճակատագիր», «Կյանքի գրկում», «Հազար ու մի սեր» գրքերը:

1963թ.-ից եղել է Հայաստանի գրողների միության անդամ, 1989-1991թթ.՝ Հայաստանի մայրության հիմնադրամի փոխնախագահը, 1992-1995թթ.՝Արցախյան պատերազմում զինվորների աջակցության հանձնաժողովի նախագահը:

2002թ. գրել է «Հովհաննես Շիրազը իմ հուշերում», 2004թ.՝ «Պարույր Սևակը իմ կյանքում» հուշագրությունները: Թարգմանել է ռուս բանաստեղծ Ախմադուլինայի «Բանաստեղծություններ», սլովակ Միրոսլավ Վալեկի «Հեռավոր հանդիպում», ռումին դասական Թուդոր Արգեզիի «Խորհրդավոր սաղմոս» բանաստեղծական գրքերը և մակեդոնացի Սլավկա Մաննայի «Ջիջի» մանկական պատմվածքների գիրքը: Նրա բանաստեղծությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

Մասնակցել է միջազգային պոեզիայի փառատոների:

1985թ. գրել է «Ամենափրկիչ», «Հովհաննես Մկրտիչ» և «Աստծո տեսիլք» պոեմները, որոնք առանձին գրքերով հրատարակվել են հայերեն և անգլերեն լեզուներով: 2003թ. այդ պոեմներն ուղարկել է Վատիկան՝ Հռոմի Պապ Հովհաննես Պողոս Երկրորդին:

1998թ. արժանացել է ՀՀ ՊՆ ոսկե և «Զորավար Անդրանիկ» մեդալների, 2004թ.՝ ոսկե մեդալի՝ Արցախի ազատագրման գործում ունեցած ավանդի համար: 2008թ. արժանացել է ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալի:

Մետաքսեն մահացել է 2014թ. Երևանում:

Բանաստեղծուհի Մետաքսեի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տիգրան Մեծի պողոտա հ.8 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի գրողների միության նախագահ Էդ. Միլիտոնյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՄԵՏԱՔՍԵԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մետաքսեի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՄԵՏԱՔՍԵԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մետաքսեի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ